

ՏՆՕՐԷՆ-ՆՍՐԱԳԻՐ

Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱՄԱՆ ԿԱՐ ՈՐ ԵՆ Է ԳՐՈՒԹԻՒՆ  
ՊԵՏՐ Է ՈՒՂԻՆԻ ԱՌ

Խմբագր. ԱՐՇԱԿՈՅՐ ԲՐԱԳՐ  
ԳԱՇԻՐԷ (Հասցեագրվել)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HABANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)

# ԱՐՇԱԿՈՅՐ

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ԽՈՍՏՈՒՆ ՀԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահլիճ. 60	
Վեցամսեայ » 35	
ՕՏԱՐ ԵՐԿԵՐՆԵՐ	
Տարեկան Պրակտիկ 20	
Վեցամսեայ » 12	

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԵԼ ԿԱՆԽԿ Է  
ՆԻ ԹՂԹԱՏԱՐԻ ՉԱՆՔԸ  
Խմբագրութեան վրայ:  
Խմբագրութեան ուղղում  
գրութիւնն էս չեն տրուիր:

## ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆ

Գահիրէի հայ գաղթականութիւնը Ուրախիւրաց եւ Աղքատախնամ ընկերութիւններէն վերջը ահա՛ Լսարան-Ընթերցատուն անուամբ ընկերութիւն մ'ալ կազմեց: Քստմնեցուցիչ գէպքերէն հարուածեալ եւ բազմին զրկեալներէն մէկ փոքր մասին մարմնական անհրաժեշտ պէտքերը հայթայթելէ ետքը մտաւորականը եւ չ'ուզեցին անտես ընել:

Ասիկայ հայ ազգին առանձնայատուկ մի հոգեկան վիճակն, բնատուր մի յատկանիչն է. առանց վերացականին, հոգեկանին չ'կրնար ապրիլ նա. Հոն կը փնտռէ միշտ իւր ամենամեծ գոբազդութեանց մէջ իսկ իւր կազդուումն եւ միթարութիւնը:

Աներկբայ ենք թէ Լսարան-Ընթերցատունը մեծ յաջողութիւն պիտի ունենայ, քանի որ այդքան օգտակար եւ նպատակաշարմար ձեռնարկի մը մասնակցողներն խումբ մը եռանդուն եւ աշխոյժ երիտասարդներ են, որոնք գործելու, օգտակար հանդիսանալու անզուսպ փափաքն ունին: Եւ ամեն կողմէ ալ ջերմ քաջալերութիւն պիտի գտնեն անշուշտ, որով կարող պիտի ըլլայ ընկերութիւնը իւր օգտակար նպատակին ծառայել արդիւնաւոր կերպով:

Լսարան-Ընթերցատան մը օգուտը մէկէ աւելի է. ո՞վ կրնայ ուրանալ զայդ: Եւ մինչ մեր պղտիկներուն դաստիարակութեան խնդրոյն աւագ կարեորութիւն մը տալով այս էջերուն մէջ կը գրենք յաճախ, երբ առիթը ներկայանայ (թէ կը ցաւինք ըսել թէ տեղւոյս Ազգ. վարժարանի մասին եղած անաչառ քննադատութիւնք յարգ ո՛ր է է փափաքելի արդիւնք չեն ունեցած՝ ձեռնհաս պաշտօնական մարմնոյն ցոյց առած գատապարտելի անտարբերութեամբն.) մի թէ կրնայինք լռութեամբ անցնիլ այսպիսի օգտակար ձեռնարկի մը մասին եւ Գահիրէի ազգայնոց մասնաւոր ուշադրութիւնը եւ հոգածութիւնը չ'հրաւիրել այդ ընկերութեան վրայ:

Փոքրերուն կրթութեան վրայ խորհած ու խօսած ատեն, միթէ չ'ա՞րժեք մտածել նաեւ այն չափահաս երիտասարդներու մասին եւ, որոնք այս կամ այն պատճառով

վարժարանէն կիսաւարտ մեկնելու հարկադրուած են կամ խիստ տարրական ուսում մ'առած, եւ որք մտաւոր յառաջացման, ինքնազարգացման բուռն փափաք ունին եւ սակայն իրենց կը պակսին նիւթական միջոցներ: Ահա Լսարան-Ընթերցատունը մասնաւորապէս այդ թերին պիտի ընու: Բայց նա ո՛չ միայն պէտք եղած մտաւոր առատ պաշարը պիտի ընձեռէ այդպիսեաց, այլ այսպիսի ցոփակեաց քաղաքի մը խնամով հաճոյքներէն եւ զբօսավայրերէն, որոնց միջոցը ապականած է, կարելի եղածին չափ հեռու պիտի կրնայ պահել նորահաս անփորձ երիտասարդները: որոնք ամէն հասակէ աւելի հակամէտ են մեզի ուզելու զբօսանքներու՝ զլսաւորաբար այն պատճառաւ որ առողջ ու անմեղ զբօսանք չեն կրնար գտնել այսպիսի միջավայրերու մէջ: Այդպիսեաց թէ ինքնազարգացման միջոց մը եւ թէ հաճոյքի ժամանց մը պիտի ընձեռէ Լսարան-Ընթերցատունը:

Եւրոպայի մէջ, ուր զարգացման ամեն միջոցներ լիուրի հոգացող ա՛յնքան բազմաթիւ եւ փայլուն կրթարաններ կան, դարձեալ ընթերցատուններ բացած, լսարաններ հաստատած են: Ընթերցարանները, հրապարակային բանախօսութիւնները՝ դիտութիւնները ժողովրդեան մէջ ծանօթացնելու եւ ընդհանրացնելու կը ծառայեն, միևնոյն ատեն անոնց ճաշակը ու միտքը նրբացնելով եւ զարգացնելով:

Եթէ քաղաքակրթեալ երկիրներու մէջ անհրաժեշտ պէտք մը դարձած են, հազար ո՛րչափ տեղի կարևոր են այդ տեսակ հաստատութիւններ մեզի համար, որ զբրկուած ենք ամէն դիւրութիւններէ: Գրական հանգէտներու եւ գրքերու հրատարակութիւնն ալ բազմապատկառ խիստ նուազ է մեր մէջ եւ կը ծնեն ալ իրենց բարձր գներով դիւրամտացելի չեն մեր միջին դասակարգին: Ահա առանց պակասը չեցնելու կոչուած է ժողովրդական Լսարան-Ընթերցատունը, որ եթէ պէտք եղած նիւթական ու բարոյական աշակցութիւնը գտնէ ժողովրդէն, յառաջիկային գասընթացքներ հաստատելու մտադիր է եղեր՝ ի մէջ այլոց արարելէն, գազդիւրէն եւ անդրիւրէն լեզուներու համար: մասնաւոր անդրիւրէնը՝ որուն պէտքը օր ըստ օրէ խիստ զգալի

կ'ըլլայ այս երկրին մէջ յաջողիլ կարենալու համար ո՛ր է է գործի, կամ պաշտօնի մէջ: Այս լուրը ո՛րքան ալ կանխահաս ըլլայ, սակայն խիստ փափաքելի է որ ժամ առաջ իրականութիւն գտնէ:

Այս առթիւ առաջարկ մ'ալ մեր կողմէն. թէ որ կը ներուրի կարելի չէ՞ արդեօք որ կազմալուծեալ վիճակի մէջ գտնուող նախորդ Ընթերցարանի ( ի վերջոյ Քյիւպի փոխուած) անդամք անձնատիրական փոքրիկ նկատումներ մէկ կողմ թողլով գան միանան նորերուն: Երկուս կողմի միացմամբ քիչ ժամանակի մէջ ընկերութիւնը նիւթապէս ու բարոյապէս փափաքելի զարգացումը պիտի ունենայ յօգուտ աւելացի ազգայնոց: Այդպիսի կարգադրութեամբ շուրջ 200 սակուոյ գրքերն ու գոյքերը — որոնք նոյնպէս ժողովրդական հանգանակութեամբ հայթայթուած են — փոխանակ եկեղեցւոյ Մախգէն ին խորը կամ սենեկի մը մէջ փոստելու, ոչնչանալու՝ օգտակար կերպով իրենց նպատակին պիտի ծառայէին: Միթէ լաւ չըլլար, կըսենք, որ այդ գրքերը փոխանակ փոշիներուն տակ ցեցերու, մուկերու կեր ըլլալու, մտքերու ճարակ հայթայթեն: Ատով նախորդ Ընթերցարանի Ընկերութիւնն ալ ՚ի սպառ մուսուլման չպիտի գատապարտուէր, այլ նոր ընկերութեան բարոյական շէնքին պէտք եղած ատուցելի կարևոր մի մասը ինքը բերած ըլլալու քաղցր հաճոյքը ու յիշատակը պիտի ունենար ընդ միշտ:

Երկուսուք բարի կամեցողութեան կը սպասենք կարգադրութիւն մը յօգուտ նորակալմ' Լսարան-Ընթերցատան՝ որուն կը մտալթենք ՚ի սրտէ կատարեալ յաջողութիւն եւ յարատեւութիւն:

ՀԱՅԿՈՒՆԻ

## ՄԱՍՆԱԻՐ ՆԱՄԱԿԱՆԻ

Ա.

ՆԱՄԱԿ ԱՌ Պ.

ՄԱՂԵՆ ԿՈՄՊՐԻՍ

Բարեկամ. — Ստուգիւ իրաւունք ունիմ ըսելու թէ ձեր անվերջանալի հարցերուն մանրամասն պատասխանները տալու համար, կրնամ ըսել՝ ձանձրանալու վիճակին հասած եմ: Ամէն բանի մէջ մանրամասնութիւն կ'որոնէք:

Ձեր հետաքրքրութեան որոշ չափ մը նշանակելու համար ո՛չ Բեռլինը եւ ո՛չ ալ Կիւս մտածած են գործիք մը հնարել իրենց ջերմաչափերուն հետ, որպէս զի ի հարկին կարենայի գործածել Աւելին կայ. ամեն բառարաններու զիմեցի, նոյն իսկ Հաւեքի պատմական եւ աշխարհագրականին եւ չկրցայ գտնել բառ մը կամ պատմական իրողութիւն մը, որոնցմով կարենայի սահմանել ձեր չափազանցեալ հետաքրքրութեան որքանութիւնը:

— Վարժարան կ'ընէք ու կը պահանջէք ի՞նչ. — Մանրամասնութիւն :

— Առաջնորդարան կը յիշէք եւ դարձեալ նոյն երկար բառը կը գնէք առջեւը:

— Եկեղեցի կը գրէք. — Անբաժան գործածելով օ՞ո՞:

— Ժողով ժողովակա՞ն. — Դարձեալ նոյնը:

— Ազգ. Սահմանադրութիւ՞ն. — Միեւնոյն հարցը:

— Ազգային զգացու՞մ. — Նոյնը:

— Հապա սա « չ'իշուի » ին մանրամասնութիւնները Ա՛լ մի հարցնէք. բոլորովին զուլսս ասարաւ:

Ազգային գործերով պլշկուած անձա՞նց. — է՛հ. ասոնց գործերու մասին գրածներէն չէք գոհանար եւ ի՞նչ արտառոց գաղափար. կենսագրութիւններն ալ կուզէք եւ անոնց մեծին ու պղտիկին նկարագրներուն վրայ ալ ընդարձակ ծանօթութիւններ օ՞ո՞:

Եւ զեռ ի՞նչ հարցեր պիտի ուղղէք, ո՞վ գիտէ . . . :

Ես այժմէն այդ ամենուն ալ գրչի մէկ հարուածով պատասխանելու նպատակը ունիմ միանգամ ընդ միշտ ձանձրոյթէ ազատելու համար: Հաւատացէ՛ք, եթէ կարելի ըլլար գտնել Տօն Դիօսի երանելի սպասաւորը, Սանֆօ-Բանֆօն, երկաթուղւոյ ծախքերը հոգայտով, նամակին հետ միասին ուղղակի հոտ պիտի զրկէի, իմ գրածներուս մէջ մտթ երեւցած մասերը ձեզի առակներով բացատրելու համար, որովհետեւ Սանֆօ-Բանֆօ սովորութիւն ունէր իւր սիրով հետ առակներով խօսելու: Բայց քանի որ զայն գտնել ու ձեզի զրկելը անկարելի է, ուրեմն ես ալ կրցածիս չափ եւ Արեւոյտի էջերուն ներած սահմանին մէջ պիտի խօսիմ ձեզ հետ եւ պէտք է որ այսչափով գո՛հ ըլլաք եւ այլ եւս մասնաւոր նամակի չ'ըսպասէք:

Ուրեմն ձեռք առնեմ նախ ՎԱՐԺԱՐԱՆԸ, որ ձեր երկարաշար հարցերուն առաջինն է:

Վարժարանի շէնքը բաւական հին է, ոմանք կրեն թէ Ազգային մնացած է. ոմանք կը կարծեն թէ Նոյն տապանին տախտակները քակած ու անոնցմով շինած են: Բայց ոչ մին է ոչ միւսը. ամենէն ճիշդը սա է թէ վարժարանը Ազգային Սահմանադրութեան ծնած տարիները առատաձեռն հարուստի մը, ԳԱՆՍԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱՅԻ, որ Եգիպտոսի խաղի Մուհամմատ Ալի փաշայի օրերը ապրած է, քուսկէն դուրս ցատքած է նոյն քսակէն իրեն հետ դուրս քաշելով անգլիի Ալպարտի ներալ:

Վանեցի այդ փառահեղ մարդը, որչափ որ ալ այն ատենուան տոհմային զգացումէ զուրկ միջավայրին մէջ ապրած է, այսու ամենայնիւ իր ոսկորներուն մինչեւ ծուծը թափանցած զուտ հայկական արիւնը տարած է յաղթանակը միջավայրին վրայ՝ եւ ԵՂԻՑԻ ԼՈՅՍԸ գոռացած է իրեններուն համար:

Պեճի Սուրհէ կամ Դանքարա, որը կուզես ըսէ, ժամանակաւ Դահիբէի փայլուն թաղերէն մին եղած եւ իր շատ մը պատմական անցեալներն ունի, որ իմ ներկայ գրութեանս հետ սերտ յարաբերութիւն չունին. բայց վերջապէս կրնայ ըսուել թէ, քաղաքիս արդի փայլուն թաղերէն միոյն Իսմայիլիէի կը համապատասխանէ եղեր: Հոտ կառուցուած է ՎԱՐԺԱՐԱՆԸ:

Հիմակ սակայն վարժարանի աշխարհագրական դիրքը քանի մը բառով բացատրելու համար կըրնանք ըսել թէ իւր սահմաններն են վեր ի վերոյ՝

Արեւելքէն՝ ապակները կապոյտով ներկուած խարխուղ տուն մը՝ որ Թեմաքիտի ներու աղտոտ պատերով կը յիշեցնէ Թշուառները կարողացողներուն եւ՝ նեղ ու փոշիւղջ փողոց մը, ուր տեղէն անցնելու համար քանի մը տարի առաջ Եգիպտոսի Առաջնորդ մը վախ կը յայտնէր թէ Ումմ-Եուսեֆ ին տունը անցնողին վրայ պիտի փլիւ...: Միեւնոյն ժամանակ

կ'ըսուի թէ, եթէ բարեհաճէր այցելութիւն մը տալ վարժարանին, զինք առաջնորդող Ղափազիճ ձեռքը խոզանակ մը գտնուիլը անհրաժեշտ կը նկատէ եղեր այդ փողոցներէն անցնելէ վերջ իւր ձիւկալէ ին փոշիները մաքրելու համար:

Արեւմուտքէն՝ Երուսաղէմապատկան աւերակ մը, որ երկար ատեն զինք զիտողներուն Հայաստանի արդի վիճակը յիշեցնելով, գեպալիներու աղբիւններուն տակ հեծելէ վերջ, ներկայէս քանի մը ամիսներ առաջ միանգամ ընդ միշտ իւր գերութեան շղթաները թօթափած է ինքզինքը ծախելով . . . : (Այս Երուսաղէմական հողին հատուածը արեւի վարժարանին կցել կը վայլէ կրսն, եթէ վարժարանը միշտ հոտ մնալու սահմանուած է):

Հիւսիսէն՝ կիսափուլ տուներ, սակալի փողոցներ, մութ, արեւազուրկ, մանուածապատ ու մամուկապատ: Գիշերները մարդ չ'համարձակիր առանց լապտերի այդ փողոցներէն անցնել Մամուկ ներու երկիւղէն եւ ոմանք կ'ըսեն նոյն իսկ թէ երբեմն այդ տեղեր ձանձրեալ մահեր ալ պատահած են: Այս նեղ փողոցին երկու կողմերը գտնուած տուններուն առջեւէն 120 ի չափ դէպ ի հիւսիս քայլեր առնելով ձախարդը կը հանդիպի . . . տուներու, ուր Բագոսի թոռներն ու թոռնորդները աստղկան տաճարին երկրպագելու կամ ինքզինքնին ողջակեզ մատուցանելու կերթան . . . :

Արեւելեան հարաւէն՝ կիսաւեր պատեր, որոնց առջեւէն նոր Թրամվէյի գիծը պիտի անցնի եւ հոս վարժարանին սահմանները կամաղջանան. եթէ մոռնալ չ'ուզուի քիչ մը առաջ փելու վճանգին ենթակայ ներկայացուցուած տունն ալ, որ զետեղուած է գծուած սահմաններուն բուն իսկ հարաւ-արեւմտեան կողմի վրայ:

Վարժարան յաճախելու համար այդ կողմէն անցնող աշակերտք բայրու չորս լծորդութեան պարունակած ամբողջ ժամանակներուն պատահած կըլլան արդէն Արարեթէն լեզուով . . . եւ վարժարանին մէջ միայն Ֆրանսերէնով եւ անգլիերէնով կը խոսին:

Երբեմն Խորէնեան, իսկ այժմ զգեստները փոխելուն պատճառաւ (\*) Գալստեան վարժարանը կը տատանի այս սահմաններուն մէջ, ինչպէս քեցակեր նաւակ մը, որ ալեկոծեալ ծովին վրայ իւր թեւը հովին տուած մերթ ըլլակի նման կոհակի մը սարը կ'իլլէ, մերթ փոքրալի հովի մը մէջ կը զլորի եւ այսպէս ելեւէջներ կ'ընէ կայծակի պէս սուբալով. սակայն միշտ վտանգի մէջ:

Կը տեսնէ՞ք, բարեկամ, ի՞նչ երեւելի եւ աներեւոյթ փորձանքներ վերապահուած են վարժարանի մանրամասնութիւններով զբաղիլ ուղող հետաքրքիր մէկուն համար:

Ինչ որ է, նկարագրած բոլոր տեղերէս անցած եմ եւ զեռ նոր կը համարիմ վարժարանի դուռը: Ինչպէս վերը ըսուեցաւ, երբ վարժարանի ներքին մասերուն երկու տարին անգամ մը, զարոցական արձակուրդի ատեն շարք կը արուի, այս ծերունի դուռն ալ իր բաժինը կ'առնէ — իւզոտ ներկ մը — եւ այնչափ գոյներու զանազանութիւններ իրարու յաջորդած պէտք է ըլլան հիւսայ, որ եթէ ատոնց սերնդեան պատմութիւնը ճարտար գրիչէ մը հրապարակ ելած ըլլար, շատ հետաքրքրաբար պատմութիւն մը պիտի համարուէր. այնպէս որ իրարու ձեռքէ պիտի յափշտակէին:

Դրան վրայ խանութի մը ազգարարութեան (չատերուն համար երբեմն իրր խանութ ծառայած է վարժարանը) ոճով խոշոր տախտակի մը վրայ Արաք. Ֆրանս. Հայեր. եւալեզու «Խորէնեան վարժարանի հայոց եւլն» գրուած է: Այս երկոց երանեալ տախտակին ալ զրանը պէս ծերացած է — մէկ կողմին վրայ ծուծ է ըսել կուզեմ: Խոնարհութեան այս ձեւը երկու պատճառներու կը վերագրեն: Ոմանք կ'ըսեն թէ վարժարանի շինութիւնէն ի վեր վարժարան. վարժարան. աղաղակած է եւ տեսնելով որ իւր գոտում գոչուած ապարդիւն կերպով յօջա կը ցնդի, յուսահատութենէն ինքզինքը վար պիտի նետէ: Ոմանք ալ կը կարծեն թէ ամեն անգամ երբ ծերունի դուռը ներկարարներուն

(\*) Կարեւոր նորոգութիւն մը չ'հասկցուի: Վարժարանին իրաւունքը երկու տարին անգամ մը պլասաճա մը հագնելով, շարունակ կ'իյնալու նման ծախքերու հաշուեցուցակներուն մէջ երկար շրջադարձութիւն կատարելն է:

վրձնովը կը զարդարուի եւ այդ շնորհէն խապա կը զրկուի լեզուագէտ ազգարարը, դրան վրայ նախանձառ ակնարկ մը ձգելու համար ծոած է:

Այս ենթադրութիւնները սակայն չ'գոհացուցին զիս եւ անցորդի մը հարցուցի. թէ ինչո՞ւ արդեօք ազգարարութիւնը ներկուած չէ դրան պէս. — անցորդը շատ յստակ կերպով բացատրեց թէ վարժարանը այլ եւ այլ գոյներով ներկել ու շպարել տուողները, Առաջնորդարանի տետրակները եւ հայ ժողովուրդին աչքերը միանգամայն ներկելու զբաղած ըլլալով, ամէն անգամ ալ կը մոռնան ինեզ լեզուագէտ ազգարարին որոշ գոյն մը տալու եւ այսպէս ընդ միշտ անգոյն կը մնայ . . . մէկուն պէս:

Ինչ որ է, դուռովը մուտովը շատ զբաղեցայ կարծեմ, բայց սա պարզապէս ձեր Մանրամասնութիւն բառին պատասխանելու նպատակաւ է: Դրան ետեւ փոքրիկ քար մը դրուած է հովէն չ'բացուելու, կամ աւելի ճիշդը ծոյլ տղաքներուն փախուտի ճամբայ չ'մտալու համար. կամացուկ մը հրեցի ու բացուեցաւ ճրճալով — ազգարարութիւնը Խորէնեան ու պաշտօնական շրջանակներու մէջ Գալստեան անունով ծանօթ վարժարանին ներսի կողմը կը գտնուիմ այս վայրկեանիս: Կ՝ՅԾԱԿ

### Ա.ՉԳ.ԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

«Չ'իշուի» ի հարցը որչափ որ Ազգային ժողովներու շրջանակին մէջ տեղափոխութիւններ ընէ եւ Պատ. Երեսօփ. ժողովոյ սեղանին վրայ սպասէ, այնչափ ալ, կերեթի թէ ժողովուրդը պիտի յաման իւր պահանջման մէջ: Պատարագիչը ընդհատելով ժողովրդեան մէջէն «Գոհութիւն» երգելու նորագոյն մեքոսը, ինչպէս կը լսենք, այս կերակի ալ ի գործ դրուած է:

Պատ. Երեսօփութեան ժողովոյ Ատենապետ Վահմափայլ Տիգրան փաշա որ Եւրոպա կը գտնուէր օգափոխութեան պատճառաւ, երեք օր առաջ Գաղաքս ժամանած է. մեծ հաւատք ունինք թէ նորին Վսեմութեան վերադարձովը վերջնական կարգադրութեան մը պիտի յանգին խել մը առկախ մնացած ազգային հարցեր, որոնք պատճառ եղած են ժողովականաց եւ ժողովրդեան մէջ խաղաղասիրական ոգին խախտելու եւ անօգուտ վէճեր առաջ բերելու:

Եւրոպական թերթերէ կը տեղեկանանք թէ Օրմանեան Պատրիարք Վ. Սուլթանին մատուցած է իւր հրատարականն, այս անգամ վերջնական կերպով: Որովհետեւ, եթէ իրաւ է, հրատարականին վրայ պնդած է՝ կ'ըսուի:

### Ա.ՉԳ.

Յառաջիկայ կ'երակէ 22 Հոկտ. նորուկամ Լսարան-Ընթերցատուն ընկերութեան Ընդհանուր ժողովը ի նիստ պիտի գումարի կէս օրէ վերջ ժամը 2ին Ապու Խալիլի թատրոնին մէջ. օրակարգ ունենալով՝

- 1. Ընթերցում եւ վաւերացում ներքին կանոնագրի:
- 2. Ընտրութիւն Մայր Դիւանի Ա. Ատենապետին:

Կը խնդրուի բոլոր անդամներէն, ինչպէս նաեւ անդամակցիլ փափաքող ազգայիններէն որ հաճին ներկայ գտնուիլ սոյն նստի գումարման: Ի դիմաց Ընդհ. ժողովոյ Դիւանի Լսարան-Ընթերցատուն Ընկ. Գահիրէի Հայոց Բ. Ատենապետ Ա. Ատենապետ Ե. Քէրէթթէճեան ՏՐ. ՅԱԿՈՒԲԱՆ Գահիրէ, 18 Հոկտ. 99.

### ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Պուլիարիոյ Վառնա քաղաքէն Տիար Բ. Կ. Պոնճուքեան զրկած է մեզ իւր Նոր Ընթերցարանն հեղինակութենէն օրինակ մը։

Հայ վարժարաններու նախապատրաստական կարգաց պզտիկներուն համար, հեղինակին սոյն գործը շատ օգտակար կրնանք համարել, գիւրուսոյց և հրահանգիչ մէկուսով մը պատրաստուած ըլլալուն պատճառաւ, մանաւանդ երբ ձեռնհաս ուսուցիչներու միջոցաւ կ'աւանդուի այն։

Գրքոյին գինն է 60 սանդիմ. գրպաններու և առ նուազն 20 օրինակ գնողներու համար 15 0/0 զեղչ։

Իրմեւ հեղինակի հասցէին։

### ԱՆՑԵԱԼԸ

Մասնումներս են գիշերուան պէս մութ, սեւ . . .  
 Զունին անոնք իրենց թրոխ սուր, որոշ . . .  
 Ամպոս երկինք մըն է միտքս՝ ուր թեթեւ . . .  
 Առհի ամպերն ունին ծփանք անորոշ։

Աստղ մը չկայ մութ ամպերու ծալքին տակ,  
 Նուազ ցոլք մը գէթ նշուէ՛ գանկիս մէջ . . .  
 Ուր այրէին իմ խոհերուս բոցեր տաք,  
 Ուր երազներս կառնուին իսկ կեւէջ . . .

Ո՛վ . . . այդ կրակ անցեալէն ինչ մնաց արդ . . .  
 Մոխի՛ր միայն ես կը տեսնեմ բոցի տեղ . . .  
 Իմ երեսիս՝ երբեմն գարնան պէս զուարթ . . .  
 Զիււազ ոչինչն ինդայ ժպտողն իր տգեղ . . .

Սառնենք մոխիրն այդ կրակին, ո՛վ գիտէ . . .  
 Գուցէ գոնենք ցոլք մը, կայծ մը անցեալէն . . .  
 Ամենէն մութ գիշերուան մէջ իսկ գիտէ՛,  
 Աստղիկ մը մի՛շտ կը պլպլայ գողպէն . . .

Աղիքաւորիա ՄԱՌԻ

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Տակաւին լուր մը չէ առնուած Մաֆէքինէն, որուն վրայ յարձակած են Պօէրք, բայց այն կողմերէն հրետանիի թնդիւններ լուծած են։

Այն զօրագունգը որ մարտկոցաւոր կառախուսքին մէջ կը գտնուէր, 4 ժամ անընդհատ կրակ ըրած է թշնամույն դէմ՝ կառախուսքը գծէն դուրս ելնելէն վերջը։ Բայց Պօէրքերուն հրետանին ընկճած է գիւրենք։ Երկու մարդ կրցած են փախչիլ։ Գերի բռնուողներուն մէջ կը գտնուի տեղակալ մը որ թեթեւագէտ վերաւորուած է։

— Պօէրք Քէմպրիլէյի հարաւային կողմը հեռագրական թեթիւրը և երկաթուղւոյ գիծերը կտրել են։ Պօէրքերը Տիւրպան քաղաքին շրջակաները ևրեցած են։

Կլէնքօնն եկող գիշերապահ զօրքեր Պօէր շտականերու հետ հրացանի հարուածներ փոխանակած են։

Պօէրքերու կողմէն Նիւքասըլի գրաւուիլ հաստատուած է։

Զօրապետ Սըր Պիւլլըր Հարաւ Ափրիկէ մեկնած է անցեալ շաբաթ օր՝ ընդհանուր հրամանատարութիւնը ստանձնելու համար։

Կայլէսի իշխանը, Քէմպրիճի Գուքուր և Լօրա Ուօլքէյ, և Լօրա Լանտտուուն Վաթէրօի կայսրանը գալով Զօրապետին և իւր սպայակոյտին ողջելով մաղթած են։ Կայսրանին մէջ խուռն բազմութիւն մը խանդավառ ցոյց մը ըրած է ի նպաստ զօրապետին և սպաներուն։

Փրանսական լուր ոսկեդրամներն . . . — Մօտ ժամանակներս Փրանսայի փողերանոցն պիտի կտրէ. Հասարակապետութեան խորհրդապատկերը կրող, 40 և 100 ֆրանքնոց առաջին նոր սակեդրամներն։ Անօգուտ է ըսել թէ այդ դրամներն շատ հազուագիւտ պիտի լինին, վասն զի դեռ սովորութիւն չէ եղած 40 և 100 ֆրանքնոց սակի գործածել. քանի որ 50 և 100 ֆրանքնոց կահուղիկ, աղւորիկ գեղեցիկ թղթագրամներն կան, որոնք թէ աւելի թեթեւ են եւ թէ աւելի քիչ տեղ կը բռնեն։ Այս նոր դրամներու առաջին օրինակներն 1900 ի ցուցահանդէսին փողերանոցի բաժնին մէջ ի ցոյց պիտի դրուին։ Այդ դրամներուն քանդակագործն է Փրանսացի յայտնի արքիւսքներէն մին Պ. Շափլէն։

Թուր — Աստուանակր. — Ծանօթ է թէ թուրի — հեծելազօրներու ամենամեծ պաշտպանողական գործիքին — ազդեցութիւնը ո՛րչափ նուազած է զրահաւորներու հանդէպ. թուրը հանդիպելով այդ պողպատեայ կուրծքերուն՝ կը սահի և հարուածն ի դերև կելլէ, միայն դէմքն կը մնայ վիրաւորելի և որուն դպչելն ալ շատ դժուարին է։ Կը մնան սրունքներն. իսկ սրունքներէն թուրի հարուածով վիրաւորեալ մը՝ շատ հազուագիւտ դէպքերու մէջ միայն պատերազմը շարունակելու անկարող գրութեան մը մէջ կը գտնուի։

Ուրեմն նոր միջոց մը կուսումնասիրեն մարդիկն աւելի լաւ սպաննելու համար. այդ գիւտը պիտի լինի «թուր ատրճանակը» որով թուրի հարուածին հետ թշնամին պիտի ստանայ նաև — իբրև ընծայ — գնտակ մը որ կարող պիտի լինի ամենակարճը զրահներն ծակել։ Ատրճանակն կարճակուի այն միջոցին որ զինուորն իւր թուրին ծայրով կը մշտէ իւր հակառակորդն. այսպէս թըշնամին երկու հարուած կ'ստանայ մին սուրի և միւսը ատրճանակի։ Ատրճանակն պարպուելէ յետոյ թուրը գարձեալ իբրև պարզ թուր կը գործածուի։ Ահաւասիկ յառաջդիմութիւն մ'ալ. որպիսիներ, անտարակոյս, դեռ շատ պիտի լինին — Երանի՛ Լահէի խաղաղարարներուն։

ՓԱՐԻՉ A. Saissy  
 ՊԻՐՈ ՏԷՆՅՕՐԻՄԱՍԻՕՆ

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Խ Ն Ն Ե Ր

Հետեւեալ նամակը նոյնութեամբ հրատարակելով կը յուսանք թէ Որբախնամ Ընկերութեան գործունեայ անդամոց ու շաղկապները պիտի կարենանք հրաւիրել իրողութեանց վրայ. մենք փափաքող ենք որ ազգային ո՛ր և է ճիւղի գործիչները քննադատելի ըլլալէ ընդ միշտ վեր մնան։

Գահիրէ, 99 4/16 Հոկտ.

. . . Խմբագրի,

Կը ինդրեմ որ անկիւն մը շնորհէք «Արշալոյս» ի Էջերուն մէջ. մեր երկտող գրութեան։

Ստոյգ տեղեակ եմ թէ Որբախնամ Ընկ. երկու ժողովներն ալ գրեթէ անպաշտօն վիճակի մը ենթարկուած են. ոմանք հրատարակելով ոմանք տեղէս մեկնելով, և արդէն այդ պաշտօնէութեանց շրջանը լրացած է։

Ուստի կը խնդրեմ, պատուարժան թերթիւք միջոցաւ յայտարարել մնացեալ պատուարժան ժողովոյ անդամոց որ կատարեն իւրեանց պարտականութիւններ, և գումարեն Ընդհանուր ժողով ու նախապէս գծուած օրէնքներն գործադրեն յանուն որբոց բարենպատակ գործին։

Շնորհակալութիւնս կը յայտնեմ անոնց որք անձնուիրաբար ծառայեցին յանուն որբացեալ մանկոց։

Փ. ՀԱՊԵՇԵԱՆ

Աղէքսանդրիա, 16 Հոկտ. 99

Այս առաւօտ ժամը 5ին որոշուած էր Մուհամմետ-Ալի-Օպէր ոճրագործին կախազանի արարողութիւնը։ Ամբողջ գիշերը հետաքրքիրներու անհամար բազմութիւն մը կին, ձեր, տղայ քաղաքին փողոցները կը չափչփէին որոշեալ ժամը չի փախցնելու համար. ժամը 3 էր. արդէն եղերագութեան վայրը խիտ առ խիտ գրաւած էր բազմութիւնը։ Մուհարրէմ Պէյի կողմը 50 մէթր շառաւիղագծով շրջանակի մը մէջտեղ կը բարձրանար կախազանը աստղալից երկնքի մը տակ։ Կախազանը շրջանակած էին ոստիկանական պաշտօնեաները, հոն էին եւ մամուլի թղթակիցք. ու դարձեալ 250 հրացանակիր փոլիսներ հեծեալ եւ հետեւակու ժամը կի ատենները անուշի մութին ցցուած կախազանին վրայ վիթխարի ստուեր մը երեւցաւ, մութը զինքը աւելի կը խոշորցնէր. դահիճն էր այն, որ կը փորձէր վերջին անգամ իր ոճրագործին հաստատութիւնը ու գոհ վար կ'իջնէր։

Հեռուն միւէզդիւններու ծայրէն կանաչակիր մուլլաի բիւրեղ ձայնովը միմիտուն եզերն կ'որբուէր. ու քիչ վերջը քրիստոնեայ եկեղեցեաց զանգակները կը հնչէին, որուայ պատարագի ժամն ալ հեռու չէր արդէն. ժամը 5ին ոճրագործի բանտակառքը (Voiture cellulaire) կը ճեղքէր բազմութիւնը. « Եկա՛ւ » ըսին ամենքը. Գիւս աստղերը կը կարկչէին ու հազիւ երբեմն նշմարելի կ'ըլլար ասուպ աստղի մը երկար գծով վար ընկնելը, որ ուսմիկ ֆէլլահին համար Մուհամմետ-Ալի-Օպէրին աստղն էր անշուշտ։

Կառքը կանգ առաւ սրահին տակ, սողնակները քաշուեցան, յանցապարտը իջաւ քիչ մը շուր ուղեց. տուին. Կառավարութեան պաշտօնեայ մը մահուան դատավճիռը կարդաց. հարցուց թէ բան մ'ունի՞ ըսելիք եւ կուզէ՞ աղօթել, (Թիմաղիլի՛ ձեւակախութիւն . . .) Ոճրագործը քանի մը բոպէ կառքին խցիկը առանձնացաւ. յետոյ դահիճը դուրս բերաւ զայն. իր օգնականով զայն առաջնորդեց 18 աստիճանով ասնդուխէ մը. մութին մէջ երկու դահիճ եւ մէկ հէզ յանցապարտ վարկիւն մը երրորդութիւն մը կազմեցին. Յանցապարտը հազիւ թէ կոխեց կառաքանարանի տարիտակամանի վրայ plate-forme ճիւղաղային արագութեամբ պարանը վիզը նետուեցաւ. զս անակաւոր փեղկերը երկուքի բաժնուեցան ու Ալի-Օպէր կախ մնաց երկնքի ու երկրի մէջտեղ . . . ու անա այսպէս ըսին թէ Արդարութիւնը գործադրուած էր ' ' '։

Եօթը վայրկեանէն վերջացաւ մարդը, ու ժամ ու կէս պարանէն կախուած մարդը ի տես մնաց մարդոց։ Մութին հետ մահուան այս մութ եզանակով կատարուած զործը վերջացած էր. Արշալոյսը կը բացուէր 6 ու կէսին։ Իսկ ես կը գողայի կախուող մարդուն գէմը, սրահին տակ, ու կարծես թէ իմ ալ ոտքերուս տակէն երկիրը վախած, երկնքի ու գեանին մէջտեղ կախուած մէկի, ու

չգիտեմ, ինչո՞ւ յիշեցի յանկարծ Մուշեղ Գարբի- էյիանի ասկէ 3 ու կէս տարի առաջ նոյն ձեւով կախաղան բարձրացուիլը . . . : Մարդկային այս է՛ն վայրագ պատժաբարձութեան վրայ բռնկած պիտոյ, երբուն ու համարեա անզգայ տուն դար- ձայ. անիծելով մարդը՝ որ առիթ կուտայ իր նմանը գիշատելու ճամբուն մէջ ընկնելու :

Կախաղանը այսօր կը փոխադրեն Թէլ-էլ-Պա- ութ, ուր մի ուրիշին վրայ կառավարութեան այս ձեռի բնութիւն ունեցող մի ուրիշ արդարու- րիւնը պիտի գործադրուի եղեր չորեքշաբթի կամ հինգշաբթի օր :

Պաշտօնական դանձապետին համար կ'ըսեն թէ իր արհեստին հմուտ մարդն է. 300ի վրայ իր արհեստը ի գործ դրած է անվիճելի յաջողութեամբ. ամեն մի մարդ կախելու օրը 50 Դահ. ողջ պար- գեւ կ'ստանայ եղեր. իսկ իր հաստատուն ամա- կանն է 250 Դահ. ողջ :

ՊԱՊԻԿ ԺԳՆԱՒՈՐ

### ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈ

Յո.օգօի Պա վանառւսան մօտերը, Կամե-էլ-Պեմաթի ճիւղ գիմացը

### ԵԿԱՒՕՖ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր բացած փութին մէջ, անխարդախ ա- լիւրէ կը պատրաստուի ԳԱՂՂԻԱԿԱՆ, ԱՆԳՂԻԱ- ԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր : Սուր- ճի, թէյի եւ կաթի պարսիմաններ, եւ այլն :

Եկաւօֆ եւ Ընկերութիւն մեծ ջանք եւ հոգածութիւն պիտի ունենան իրենց դիմող բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի դո՛ւնայնելու :

Յանձնարարութիւնք ամենայն ճշգրութեամբ եւ փութով կը կատարուին 7 - 50

### ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Իւր գործատեղին հաստատած է Ապ- տինի պալատին ճիշդ գիմացի փողոցը, Շա- րա-էլ-Պոսթան թիւ 7 տան մէջ :

Ամենէն գեթուարահաններն անգամ գո- հացներու պայմանաւ կ'արդուկէ շապիկներ եւ այն ամեն զգեստեղէններն, որոց համար արդուկի պէտքը կ'զգացուի :

Ասոնցմէ զատ ունի նաեւ լուացարա- ըութեան յատուկ ճիւղ մը, ուր՝ իրեն գի- մաց յաճախորդներուն ճերմակեղէններն զատ զատ լուալու գովելի գրութիւնը հաս- տատած է :

Յաճախորդներուն գիւրութիւն ընծա- յելու նպատակաւ ճերմակեղէններն ինք անձամբ պիտի առնէ տուներէն եւ պիտի վերադարձունէ որոշեալ ժամանակին :

ԴԻՆԵՐԸ ԶԱՓԱՒՈՐ ԵՒ ԴԻՒՐԱՄԱՏՉԵՂԻ

2-8

### ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

Վկայիալ տեղական կառավարութեան եւ բժշկական վարժարանէն

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա Ապա-իւ-Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին գիմաց :

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկու- թեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակ- ցութիւնը կարեւոր առաւելութիւններ են :

Իրեն դիմողները կատարելապէս գո՛հ պիտի մնան : 10-24

### ԼԵՒՈՆ ԿՐԻՄԻՒՇԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՐԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՎՈՆՕՎՐԱՑ

Գ.Ա.ՆԻՐԷ, - Մուսրի փողոց, - Գ.Ա.ՆԻՐԷ : Ս. Ե. Ս. Սէսնավի վանառւսան գիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնսօլի ընտիր տե- սակէ բանտիւններու մեծ մթերք :

ԴԻՄԵՑԻՔ ՀՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճա- շակի յարմար զանազան տեսակ արանց եւ կա- նանց ժամացոյցներ, աղանակազարդ, ոսկի, աւ- ճաք եւ ցիֆէ :

Յրանաական եւ ամերիկեան ապրանքամե- նաքնար տեսակներէն զարդեղէններ, օղբաներ, օղի, մասանիներ եւ այլն :

Ամէն տեսակ ժամացոյցներու նորագութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ :

ԳԻՆԵՐԸ ԽՍՍ ԶԱՓԱՒՈՐ

23-50

### ՏՕՐՔՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԻԻԵԱՆ

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԼԱԲՈՅԺ Ակսին, Շարհ Բուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հա- սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակուաներ :

Կը դադրեցնէ վայրկենապէս ակուայի ցա- լերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերովն :

Կը բուժէ ինաներու եւ բերնի ամեն տե- սակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած ակուաներուն տոկունու- թիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ : 3 2-10

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ Տայիթի Սանիթի ճիւղ գիմաց

Ամենաընտիր ապրանքներ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկ- ներ, արանց, կանանց եւ տղայոց համար :

Գիները չափաւոր եւ աժան : Փորձ մը միայն կը բուէ : 15-24

## ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՐԱՏՈՒՆ

Ի Գ.Ա.ՆԻՐԷ ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահադդեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Յանկեր, Գիրքեր, տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմարներ, Բնկերութեանց եւ վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ :

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոս- տանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտագնութեան եւ գներու չափաւորութեան մէջ :

Եզրպատուի ո եւ է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք եւ փութով կը կատարուին :

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

### ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պագար Մուսրի Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը Շարա Մուշեղէյիէն փոխադրած է ի Պագար Մու- րուրի Յրանաական նորաձեւութեանց յար եւ նը- ման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբ մինչեւ ցարդ գո՛հ ըրած է իրեն գի- մաց Պատ. յաճախորդներն :

Իւր գործածած ապրանքներու տոկունու- թիւնն երբէք տարակոյս չ'վերցնէր :

Իրեն եղած յանձնարարութիւնք ո՛չ միայն չափաւոր գներով, այլ եւ փութով եւ մեծ խնա- մով կը պատրաստուին :

Գինեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ եւ կոշտերէ (նասրը) ազատ մնալ : 18-24

### Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (րասարգ) սեւ, շագանակագոյն եւ ոսկեգոյն : Սեւ ներկ չիշով վայրկենապէս սեւցնող : Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է :

### ՀԲԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադրեցնէ եւ մա- ղերը կը ճոխացնէ : Նմանապէս ճաղատ (տալ) գլուխները մաղ կը բերէ. 17 տարուան ճա- ղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիա- նալի արդիւնք տեսնուած է : Շիշը 8 դր. ողջ (2 ֆրանք) :

Ճերմկցնող շուր չիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու : Եզրպատուի մէջ միակը :

Ակուայի փոշի եւ շուր. մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող :

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ ու- ընց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են :

Կը գնենք, կը վաճառենք եւ կը փոխա- նակենք բոլոր ազգաց գործածած նամա- կադրոյմները : 3 3-8

Le Gérant Dr S. A. HAGOPIAN